Աշոտ Սմբատյան

Աշոտ Սմբատյանը (ծնվ.՝ 30.04.1969թ., Հայաստանում) դպրոցն ավարտելուց հետո ուսանել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: Որպես Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) կրթաթոշակառու՝ ուսանել է Դրեզդենի և Լայպցիգի համալսարաններում: 1993-1996թթ. նա տնտեսագիտություն է ուսանել Բեռլինի Հումբոլդթի անվան համալսարանում:

«Ընդունակ երեխաների գերմանական կազմակերպությունում» դասավանդելուց հետո նա 1999թ. աշխատանքի է ընդունվել Բոննում ՀՀ դեսպանությունում՝ որպես դեսպանի օգնական: Նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ ԳԴՀ-ում ՀՀ դեսպանությունում և ՀՀ արտաքին գործերի նախարարությունում:

2012թ. նա Գերմանիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայում վերապատրաստման կրթություն է ստացել:

2015թ. մայիսին Աշոտ Սմբատյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության դեսպան Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: 2018թ. դեկտեմբերի 13-ից համատեղության կարգով հանդիսանում է նաև Լիխտենշտայնի Իշխանապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան (նստավայրը՝ Բեռլին):

Ունի արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան: